

Ամերիկյան գրականություն, Արձակ, Պատմվածք

16+

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

ՏՐԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

THE FAITH OF MEN

Վահան Վարդանյանի թարգմանությամբ

«Տղամարդկային հավատարմություն» պատմվածքը առաջին անգամ հրատարակվել է «Սանսեթ մեգեզին» հանդեսում 1903 թվականի հուլիսին:

ՏՐԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

— Գիտես ինչ, արի գառ խաղանք:

— Համաձայն եմ,— պատասխանեց մյուսը և շոջվեց դեպի հնդկացին, որը տնակի անկյունում մոքասիներն էր նորոգում:— Հե՛յ, Բիլբիդեմ, ապա մի վազիր Օլսոնի մոտ և ասա, որ խնդրում եմք զառերը տա:

Բանվորների աշխատավարձի, վառելիքի և պարենամթերքի վերաբերյալ խոսակցության ընթացքում արված այս անակնկալ խնդրանքը զարմացրեց Բիլբիդեմին: Բացի դրանից, դեռ առավոտ էր, իսկ նա չէր տեսել, որ սպիտակամորթները,— համենայն դեպս այնպիսիք, ինչպես Պենթեֆիլդն ու Հաթչինսոնն էին,— առանց գործերը վերջացնելու զառ կամ թուղթ խաղային: Սակայն, ինչպես և վայել էր յուրօրնցի իսկական հնդկացուն, նա ոչնչով չմատնեց իր զարմանքը և, ձեռնոցները հագնելով, դուրս եկավ տնակից:

Թեև արդեն ութն անց էր, բայց դեռ մութն էր, և տնակը լուսավորված էր ճարպամուկով, որը դրված էր եղևնափայտե սեղանի վրա՝ չվացված անագե ափսեների խառնակույտի մեջ: Մոմը խրված էր վիսկիի շշի մեջ, որի երկար վզիկի վրա անհամար մոմերից հոսած ճարպն էր քարացել փոքրիկ սառցադաշտի պես: Տնակի միակ սենյակում նույնպիսի անկարգություն էր տիրում, ինչպես և սեղանի վրա: Հետևի պատի տակ երևում էր թափթփված անկողիններով երկու թախտ:

Լորենս Պենթեֆիլդը և Զորրի Հաթչինսոնը միլիոնատերեր էին, թեև ոչ ոք այդ բանը չէր կռահի նրանց արտաքինին նայելով: Նրանց մեջ ոչ մի արտասովոր բան չկար. Միչիգանի փայտահատների ուզածո՞ւ ճամբարում նրանց յուրայինների տեղ կընդունեին: Բայց դրսում, խավարի մեջ, օրական տասնհինգ դոլար ստացող տասնյակ մարդիկ խոր հորերի հատակին քարաշերտեր էին պոկում, իսկ մյուսները ճախարակներն էին պտտում՝ ապար, ավազ ու ոսկի հանելով հանքահորերից: Օրական հազարավոր դոլարների ոսկի էր հանվում, և այդ ամենը պատկանում էր Պենթեֆիլդին ու Հաթչինսոնին, որոնք Բոնանզայի ամենահարուստ արքաների շարքն էին դասվում:

Բիլբիդեմի գնալուց հետո վրա հասած լռությունը խզեց Պենթեֆիլդը: Նա իրար գլխի հավաքեց կեղտոտ ափսեները և ազատված տեղում սկսեց թմբկահարել մատներով: Հաթչինսոնը հանեց ծխացող մոմի այրուքը և, մտածմունքի մեջ ընկած, տորրեց բուրբ մատի ու ցուցամատի արանքում:

— Գրողը տանի, եթե մենք երկուսս էլ կարողանայինք գնա՛լ,— անսպասելիորեն բացականչեց նա:— Եվ վիճելու բան էլ չէր լինի:

Պենթֆիլդը մռայլադեմ նայեց նրան:

— Եթե քո անիծյալ համառությունը չլիներ, վիճելու հարկ չէր լինի: Զեզ մնում է միայն իրերդ կապել ու մեկնել: Ես կհետևեմ գործին և կգնամ եկող տարի:

— Իսկ ինչո՞ւ ես պիտի մեկնեմ: Ինձ ոչ ոք չի սպասում:

— Իսկ հարազատե՞րդ,— կոպտորեն ընդհատեց նրան Պենթֆիլդը:

— Իսկ քեզ սպասում են,— շարունակեց Չաթչինսոնը:— Դու գիտես, թե ում մասին եմ ասում:

Պենթֆիլդը մռայլորեն ուսերը թոթվեց:

— Նա կսպասի:

— Նա արդեն երկու տարի է, սպասում է:

— Ոչինչ, ևս մի տարին նրան չի ծերացնի:

— Չէ որ դա արդեն կլինի երեք տարի: Ապա մի մտածիր, ծերունկ. երե՞ք տարի այստեղ, աշխարհի ծայրին, այս անիծյալ ծակուռում,— Չաթչինսոնը հուսահատորեն ձեռքը թափ տվեց:

Նա մի քանի տարով ավելի երիտասարդ էր իր գործընկերոջից. քսանվեց տարեկանից ավելի չէր լինի: Նրա դեմքին սառել էր կարոտի արտահայտությունը այնպիսի մի մարդու, որն իզուր տենչում է այն, ինչից վաղուց զրկված է: Եվ նույն կարոտը, նույն հուսահատությունը կար նաև Պենթֆիլդի դեմքին, նրա կորացած ուսերի մեջ:

— Երեկ երազումս տեսա, որ ես Չինքենդի մոտ եմ,— ասաց նա:— Երաժշտություն, բաժակների զնգոց, աղմկալի ձայներ, կանացի ծիծաղ, իսկ ես ձուլ եմ պատվիրում. այո, սը՛ր, ձուլ՝ և՛ պինդ եփած, և՛ թերխաշ, և՛ ձվածեղ, և այնպես եմ կուլ տալիս, որ չեն էլ հասցնում մատուցել:

— Իսկ ես սալաթ կպատվիրեի,— ազահորեն ընդհատեց Չաթչինսոնը,— և մի մեծ բիֆշտեքս՝ կանաչիով, կանաչ սոխով ու բողկով, որ ատամներիս տակ խռթխռթար:

— Ես այդ բոլորը կպատվիրեի ձվերից հետո, եթե չարթնանայի,— հոգոց քաշեց Պենթֆիլդը:

Նա հատակից վերցրեց գլխովը շատ բան անցած բանջոն և մտացրիվ ձեռք տվեց լարերին: Չաթչինսոնը ցնցվեց ու ծանր հոգոց քաշեց:

— Դեն՝ գցիր,— անսպասելի կատաղությամբ ճչաց նա, երբ Պենթֆիլդը սկսեց ուրախ եղանակ նվագել:— Խելագարվել կարելի է: Անտանելի է:

Պենթֆիլդը բանջոն գցեց թախտին և արտասանեց.

Թաքուն կարոտս մատնելով, ահա երգում եմ այսպես՝

Ես տանջանք եմ, հիշատակ եմ, հուշ եմ ես,

Ես քաղաքն եմ այգաբացի՝ դեռ վաղորդյան մշուշում,

Այն ամենն եմ, այն բոլորը, ինչ որ ֆրակն է հիշեցնում:

Նրա ընկերը գլուխը ծանրորեն գցեց ձեռքերի վրա: Պենթֆիլդը նորից միալար թմբկահարեց սեղանը: Հետո նրա ուշադրությունը գրավեց դռան բարձրաձայն ճռռոցը: Դռան վրա սպիտակ ծածկոցի պես նստած էր եղյամը: Պենթֆիլդը կամացուկ երգեց.

Նախիրը գոմերում է արդեն,

Սաղմունը գետերից գնաց ծով.

Ե՞րբ ես էլ, սիրելիս տխրադեմ,

Կլինեմ քո գրկում ապահով:

Յետո նորից լռություն տիրեց, որը խախտվեց Բիբիդեմի գալով. սա սեղանին գցեց զառերը:

— Լա՛վ ցուրտ է,— խոսեց նա:— Օլսոնն ինձ ասաց, որ երեկ Յուքոնը սառել էր:

— Լսո՞ւմ ես, ծերունկ,— բացականչեց Պենթֆիլդը, ձեռքի ափով թմփթմփացնելով Յաթչինսոնի ուսը:— Ով խաղը շահի՞ նա վաղը այս ժամանակ արդեն օրհնյալ երկրի ճանապարհին կլինի:

Նա ուրախ թափահարեց զառերով բաժակը:

— Ի՞նչ ենք խաղում:

— Հասարակ պոքեր,— պատասխանեց Յաթչինսոնը:— Գցիր:

Պենթֆիլդը սեղանի վրայից գռգռոցով մի կողմ հրեց ամանները և զառերը գցեց: Երկուսն էլ անմիջապես կռացան: Ոչ մի զույգ չկար, իսկ ամենախոշոր միավորը հնգնոցն էր:

— Դատարկությո՛ւն,— հոգոց հանեց Պենթֆիլդը:

Երկար խորհելուց հետո նա բոլոր հինգ զառերն էլ հավաքեց բաժակի մեջ:

— Ես քո փոխարեն հնգնոցը կթողնեի,— նկատեց Յաթչինսոնը:

— Ոչ մի դեպքում: Ա՛յ, կտեսնես, թե հիմա ինչ կլինի,— ասաց Պենթֆիլդը ու զառերը գցեց:

Նորից ոչ մի զույգ: Այս անգամ երևում էին երկուսնոցից մինչև վեցնոցն ընկած թվերը:

— Նորի՛ց դատարկություն,— տնքաց Պենթֆիլդը: Էլ մի՛ գցիր, Զորրի: Դու արդեն շահեցիր:

Նրա ընկերը լուռ հավաքեց զառերը, շխշխկացրեց բաժակի մեջ, մի լայն շարժում գործելով նետեց սեղանի վրա ու տեսավ, որ իրեն նույնպես դատարկություն ընկավ վեցնոցի հետ:

— Համենայն դեպս, ոչ ոքի է, բայց ինձ մի քիչ ավելի լավ բան է հարկավոր,— ասաց նա և, վեցնոցը թողնելով, չորս զառերը հավաքեց: Հիմա վերջդ կտամ:

Բայց սեղանի վրա ընկած էին երկուսնոցը, երեքնոցը, չորսնոցը և հնգնոցը. նորից նույնպիսի դատարկություն, ինչպիսին Պենթֆիլդի գաճճն էր:

Յաթչինսոնը հոգոց հանեց:

— Այսպիսի բան հարյուր տարին մեկ անգամ է լինում,— ասաց նա:

— Միլիոն տարին մեկ անգամ,— արձագանքեց Պենթֆիլդը, արագ հավաքեց զառերն ու գցեց: Երեք հնգնոց ընկավ. նա երկար թափահարեց բաժակը և վերջապես երկրորդ անգամ գցելիս ևս մի հնգնոց ստացավ: Յաթչինսոնը, կարծես, այլևս ոչ մի հույս չուներ:

Բայց թե նա էլ միանգամից երեք վեցնոց գցեց: Նրա խաղընկերոջ աչքերում անվստահություն երևաց, իսկ իր հայացքը նորից հուսավառվեց: Եվս մի վեցնոց, և նա սառցի վրայով կգնա դեպի Ադի Ջուր, Նահանգներ: Նա թափահարեց բաժակը, ուզում էր գցել, տատանվեց ու շարունակեց թափահարել:

— Դե գցիր, գցի՛ր: Մի՛ ուշացրու,— խստաձայն գոռաց Պենթֆիլդը: Աշխատելով սառնասիրտ լինել, նա այնքան ամուր կառչեց սեղանի եզրից, որ եղունգները ծալվեցին:

Չառերը գլորվեցին: Սեղանի վրա ընկած էր վեցնոցը: Նրանք անշարժ նայում էին այդ զառին: Երկարատև լռություն տիրեց: Յաթչինսոնը թաքուն նայեց իր խաղընկերոջը, որը, նրա հայացքը որսալով, կեղծ ժպտաց, փորձելով անտարբեր երևալ:

Հաթչինսոնը վեր թռավ տեղից ու ծիծաղեց: Ծիծաղը նյարդային էր ու շփոթված: Այդ խաղում շահելն ավելի ծանր էր, քան տանուկ տալը: Հաթչինսոնը մոտեցավ իր ընկերոջը, բայց սա կատաղորեն հարձակվեց նրա վրա:

— Զիսոս՛ն, Զորրի: Գիտեմ ինչ ես ասելու. թե գերադասում ես մնալ, որ ես գնամ, և այդպիսի բաներ: Այնպես որ՝ լռիր: Դետրոյթում քեզ են սպասում հարազատներդ, և դա բավական է: Եվ հետո՝ դու ինձ համար կարող ես անել այն, հանուն ինչի ես ուզում էի գնալ:

— Այսի՛նքն...

Պենթֆիլդը նրա աչքերում կարդաց այն, ինչ նա կիսատ թողեց, ու պատասխանեց.

— Հենց այդ է, որ կա: Դու նրան կարող ես բերել այստեղ, ինձ մոտ: Հարսանիքը կլինի Դոուսոնում և ոչ թե Սան Ֆրանցիսկոյում, ահա և ամբողջ տարբերությունը:

— Դու խելագարվել ես,— բողոքեց Զորրի Հաթչինսոնը:— Ինչպե՛ս նրան բերեմ: Նա իմ քույրը չէ, իմ ազգականուհին չէ, ես նույնիսկ ծանոթ չեմ նրա հետ: Ինքդ ես հասկանում, որ իմ ու նրա միասին գնալը այնքան էլ հարմար չէ: Ես ու դու գիտենք, որ ամեն ինչ կարգին կլինի, բայց մտածիր, թե այդ մասին ինչ կասեն ուրիշները:

Պենթֆիլդը խուլ հայիոյեց, այդ «ուրիշներին» Այասկայից պակաս ցուրտ տեղ ուղարկելով:

— Այ, եթե դու լսեիր և ոչ թե անմիջապես քո ազնվությամբ մեջ ընկնեիր,— շարունակեց նրա գործընկերը,— ապա կհասկանայիր, որ տվյալ դեպքում ամենաճիշտը կլիներ, որ ես թողնեի՝ դու գնայիր այս տարի: Եկող տարվան սպասելուն մնում է ընդամենը մեկ տարի, այն ժամանակ ես կկարողանամ սիրտս բաց անել:

Պենթֆիլդը զուլխն օրորեց, թեև երևում էր, որ նա դժվարությամբ է դիմադրում գայթակղությանը:

— Ոչինչ չի ստացվի, Զորրի: Ես գնահատում եմ քո բարությունը, բայց ոչինչ չի ստացվի: Ես չեի կարողանա այնտեղ հանգիստ նստել, իմանալով, որ դու այստեղ կաշվից դուրս ես գալիս իմ փոխարեն:

Հանկարծ ինչ-որ մի միտք ծագեց նրա գլխում: Նա նետվեց դեպի թախտը, հաաշտաա քրքրեց ամբողջ անկողինը, վերջապես մի ծոցատետր ու մատիտ հանեց այնտեղից, նստեց սեղանի մոտ և սկսեց արագ ու վստահ գրել:

— Ահա այսպես,— ասաց նա գրությունը իր գործընկերոջ ձեռքը դնելով:— Միայն թե հասցրու հասցեատիրոջը և ամեն ինչ կարգին կլինի:

Հաթչինսոնը կարդաց գրությունը ու մի կողմ դրեց:

— Ի՛նչ գիտես, որ այդ եղբայրը կհամաձայնի մեր ծակուռը գալ,— կասկած հայտնեց նա:

— Նա կհամաձայնի հանուն ինձ և հանուն իր քրոջ,— պնդում էր Պենթֆիլդը:— Գիտես ինչ, նա փափկասուն է, և ես չեի ուզի, որ աղջիկը միայն նրա հետ գար: Իսկ եթե դու էլ լինես կողքին, կարելի է ոչնչից չվախենալ: Հենց որ դուրս գաս, գնա Ֆրիսկո և ամեն ինչ բացատրիր աղջկան: Այնտեղից էլ գնա Արևելք՝ ձերոնց մոտ: Իսկ գարնանը կգաս նրանց հետևից: Հավանաբար աղջիկն անմիջապես քեզ դուր կգա: Առ նայիր, որպեսզի հանդիպելիս ճանաչես նրան:

Այս ասելով, նա բացեց ժամացույցի կափարիչը և ցույց տվեց ներսի կողմից փակցրած լուսանկարը: Զորրի Հաթչինսոնը նայում էր, և գնալով մեծանում էր նրա հիացմունքը:

— Նրա անունը Մեյբլ է,— շարունակեց Պենթֆիլդը:— Զեզ կբացատրեմ նաև, թե ինչպես կարելի է գտնել նրանց տունը: Երբ Ֆրիսկո հասնես, մի կառք կվերցնես ու կասես՝ «Հոլմսի տունը, Միրդոն-ավենյու»: Ի դեպ, կարելի է առանց Միրդոն-ավենյուի էլ յուրա գնալ: Ամեն մի կառապան գիտե, թե որտեղ է ապրում դատավոր Հոլմսը:

— Եվ գիտես ինչ,— մի փոքր դադարից հետո նորից սկսեց Պենթֆիլդը,— վատ չէր լինի, եթե դու որոշ բաներ առնեիր ինձ համար, ասենք... ասենք...

— Այն, ինչ հարկավոր է ընտանիքավոր մարդուն,— ժպտալով նրա խոսքն ավարտեց Հաթչինսոնը:

Պենթեֆիլդը շփոթված ժպտաց.

— Այդ է, որ կա: Անձեռնոցիկներ ու սփռոցներ, սավաններ ու բարձի երեսներ և նման բաներ: Լավ սպասե՛ղեն: Չէ՞ որ նրա համար դժվար կլինի այստեղ: Այդ բոլորը կարող ես ուղարկել շոգենավով, Բերինգյան ծովով: Եվ հետո, թերևս... Ի՞նչ կասես դաշնամուրի համար:

Հաթչինսոնը ջերմ հավանություն տվեց այդ մտքին: Նա արդեն մոռացել էր իր ընդդիմությունները, և իր վրա դրված առաքելությունը ավելի ու ավելի էր գրավում նրան:

— Աստված վկա, Լորենս,— հայտարարեց նա, երբ խոսակցությունն ավարտվեց և երկուսն էլ վեր կացան,— շուքով տեղ կհասցնեմ: Թե իրերը, թե շներին փոխադրելը կվերցնեմ ինձ վրա, իսկ եղբորը կմնա միայն հոգալ քրոջ հարմարությունների մասին և նրա համար անել այն, ինչ ես կմոռանամ, թեև, սատանան տանի, մտադիր չեմ որևէ բան մոռանալ:

Հաջորդ օրը Լորենս Պենթեֆիլդը վերջին անգամ սեղմեց իր բարեկամի ձեռքը ու երկար նայեց, թե ինչպես նա և նրա շնալծվածքը սառած Յուքոնով շտապում էին դեպի վերև, դեպի Ադի Ջուր, ընդարձակ աշխարհը: Պենթեֆիլդը վերադարձավ Բոնանզայի հանքերը, որտեղ հիմա շատ ավելի տխուր էր, և արիաբար դիմավորեց երկարատև ձմեռը: Պետք էր գործով զբաղվել՝ հետևել բանվորներին, ղեկավարել քմահաճ երակի հետախուզությունը, բայց աշխատանքը նրան չէր հրապուրում: Եվ ոչ մի աշխատանք չիրապուրեց նրան, մինչև հանքի հետևում, բլրի վրա սկսեց մի նոր գերանաշար տնակ բարձրանալ: Դա լավ կառուցված, երեք հարմար սենյակների բաժանված հիանալի տնակ էր: Յուրաքանչյուր գերանը խնամքով տաշված էր. թանկ նստող քմահաճույք է, եթե հարկ է լինում օրական տասնհինգ դոլար վճարել ամեն մի հյուսնին: Բայց երբ գործը վերաբերում էր Մեյբլ Հոլմսի համար նախատեսված տանը, ապա ոչ մի ծախս չէր վախեցնում Պենթեֆիլդին: Նա զբաղվում էր տնակի կառուցումով ու երգում.

Ե՛րբ ես էլ, սիրելիս, տխրադեմ,

Կլինեմ քո գրկում ապահով:

Բացի դրանից, նա սեղանի վերևում կախեց օրացույցը և ամեն մի առավոտն սկսում էր այն բանից, որ ջնջում էր օրը և վերստին հաշվում, թե դեռ քանի օր է մնում մինչև գարուն, երբ իր գործընկերը կվերադառնա Յուքոնի սառցի վրայով:

Պենթեֆիլդը ոչ մեկին թույլ չէր տալիս գիշերել նոր տնակում. դա նույնպես քմահաճույք էր. տնակը մինչև Մեյբլի գալը պետք է մնար այնպես նոր, ինչպես նրա նոր տաշած գերանները: Եվ երբ կառուցումն ավարտվեց, Պենթեֆիլդը կողպեք կախեց դռան վրա: Պենթեֆիլդից բացի ոչ ոք չէր մտնում այնտեղ, իսկ նա ժամերով մնում էր տնակում և երբ դուրս էր գալիս, մի արտասովոր քնքշություն կար նրա դեմքի վրա, իսկ աչքերը ջերմ և ուրախ փայլում էին:

Դեկտեմբերին նամակ ստացվեց Զորրի Հաթչինսոնից: Նա հենց նոր ծանոթացել էր Մեյբլ Հոլմսի հետ: Պարզվել էր, որ աղջիկը այնպիսին է, ինչպիսին պետք է լիներ Լորենս Պենթեֆիլդի կինը, գրում էր Զորրին: Նա հիացած էր, և այդ նամակը ստիպեց, որ ավելի արագ բաբախի Պենթեֆիլդի սիրտը: Այժմ նամակները գալիս էին իրար հետևից, իսկ երբեմն էլ, եթե փոստը ուշանում էր, նույնիսկ երկուսը կամ երեքը միանգամից: Եվ դրանք բոլորն էլ նույն բանի մասին էին. Զորրին նոր է վերադարձել Հոլմսերի մոտից, կամ Զորրին պատրաստվում է գնալ Հոլմսերի մոտ, կամ Զորրին այժմ Հոլմսերի մոտ է: Թվում էր, թե նա չի շտապում հեռանալ Սան-Ֆրանցիսկոյից և նույնիսկ Դետրոյթ մեկնելու մասին չէր հիշատակում:

Լորենս Պենթեֆիլդին սկսում էր թվալ, թե իր գործընկերը արդեն չափից դուրս երկար է մնում Մեյբլ Հոլմսի մոտ, մոռանալով իր հարազատներին: Երբեմն Պենթեֆիլդը իրեն բռնում էր այն մտքի վրա, որ դա անհանգստացնում է իրեն: Բայց թե նա շատ լավ էր ճանաչում Մեյբլին ու Զորրիին, որպեսզի լուրջ անհանգստանար:

Մեյբլի նամակներն իրենց հերթին լի էին Զորրիին վերաբերող տողերով: Մյուս կողմից, երբ խոսքը վերաբերում էր աղջկա գալուն և Դոուսոնում կատարվելից հարսանիքին, նամակներում երկչոտություն ու անվճռականություն էր զգացվում: Պենթեֆիլդը պատասխանում էր ուրախ,

ծաղրելով նրա երկյուղները, որոնք, ինչպես նրան թվում էր, ավելի շուտ գրկանքներից ու վտանգներից վախենալու արգասիք էին, քան աղջկական ամոթխածություն:

Բայց ձանձրալի սպասումը և երրորդ անվերջանալի ձմեռը սկսում էին ազդել նրա վրա: Աշխատանքների ղեկավարումը և հանքերակի հետախուզությունը չէին կարող գունազարդել նրա միօրինակ գոյությունը, և Պենթֆիլդը հունվարի վերջերին սկսեց ավելի հաճախակի գնալ Դոուսոն, որտեղ կարելի էր ժամանակավորապես ամեն ինչ մոռանալ խաղասեղանի մոտ: Նա շահում էր, քանի որ կարող էր տանով տալու շքեղություն թույլ տալ իրեն, և «Պենթֆիլդի պես բախտը բերում է» արտահայտությունը սովորական դարձավ փարավոն խաղացողների շրջանում:

Նա հաջողության մեջ էր մինչև փետրվարի կեսերը: Դժվար էր ասել, թե դա երբ կդավաճաներ նրան, որովհետև մի խոշոր խաղից հետո նա այլևս թուղթ չէր վերցնում ձեռքը:

Այս անգամ խաղը տեղի էր ունենում «օպերայում» և Պենթֆիլդի խաղաթուղթը մի ամբողջ ժամ շահում էր: Ընդմիջման ժամանակ, մինչ բանկ դնողը թղթերն էր խառնում, սեղանի տեր Նիք Ինվուդը հանկարծ ասաց.

— Ի դեպ, Պենթֆիլդ, թվում է, թե ձեր գործընկերը ժամանակն իզուր չի վատնում:

— Այո, Զորրին գիտե գվարճանալ,— պատասխանեց Պենթֆիլդը:— Հատկապես, երբ նա արժանի է դրան:

— Իհարկե, ճաշակի հարց է,— ծիծաղեց Նիք Ինվուդը,— բայց իմ կարծիքով, գվարճանալն ու ամուսնանալը այնքան էլ նույն բանը չեն:

— Զորրին ամուսնացե՛լ է,— անվստահ բացականչեց Պենթֆիլդը, չկարողանալով իր զարմանքը թաքցնել:

— Ճիշտ այդպես,— պատասխանեց Ինվուդը:— Առավոտյան փոստով Ֆրիսկոյից ստացված թերթում է տպագրված:

— Իսկ աղջի՞կն ով է,— հետաքրքրվեց Պենթֆիլդը այնպիսի մի մարդու սառնասիրտ համբերատարությամբ, որը գիտե, որ իրեն ձեռք են առնում, և որ ամեն րոպե կարող է ծիծաղ պոռթկալ:

Նիք Ինվուդը գրպանից հանեց լրագիրը և սկսեց աչքի անցկացնել, ասելով.

— Ես անունները վատ եմ հիշում, բայց ոնց որ Մեյբլ էր... Մեյբլ... Այդ է որ կա՝ Մեյբլ Հոլմս, ինչ-որ դատավոր Հոլմսի աղջիկը...

Լորենս Պենթֆիլդը հոնքն անգամ չչարժեց, թեև հոգու խորքում տենդագին կռահումներ էր անում, թե արդյո՞ք այդ անունը որևէ մեկին հայտնի է Հյուսիսում: Նա հայացքը հանգիստ սահեցրեց ունկնդիրների վրայով, սպասելով, որ որևէ մեկը կմատնի իրեն, բայց նրանց դեմքերը սոսկ սովորական հետաքրքրասիրություն էին արտահայտում: Հետո նա դարձավ դեպի Ինվուդը և հանգիստ, անայլալ ձայնով ասաց.

— Նիք, ահա այս հինգ հարյուր դոլարով գրազ եմ գալիս, որ թերթում այդպիսի բան չկա:

Նիքը թերահավատ ժպիտով նայեց նրան:

— Ոչ, աղավայակս, ձեր փողերն ինձ հարկավոր չեն:

— Ես այդպես էլ գիտեի,— ծաղրանքով նետեց Պենթֆիլդը և, դեպի սեղանը շրջվելով, գումար դրեց երկու խաղաթղթի վրա:

Նիք Ինվուդը կարմրեց և, կարծես ինքն իրեն չվստահելով, ուշադիր վերընթերցեց կարճ հաղորդագրությունը, այնուհետև կտրուկ շրջվեց դեպի Լորենս Պենթֆիլդը:

— Լսեցեք, Պենթֆիլդ,— հուզված ու շտապելով խոսեց նա:— Ես այդ բանն այդպես թողնել չեմ կարող:

— Ո՞ր բանը,— կոպիտ հարցրեց Պենթֆիլդը:

— Ձեր կարծիքով՝ ես ստեցի՞:

— Բոլորովին էլ ոչ: Իմ կարծիքով դուք պարզապես հիմար կատակ արեցիք:

— Ձենտլմեններ, դուք դնո՞ւմ եք,— միջամտեց բանկ դևոդը:

— Բայց ախր ես ձեզ ասում եմ, որ դա ճշմարտություն է,— պնդում էր Ինվուդը:

— Իսկ ես ձեզ արդեն ասացի, որ ունեմ հինգ հարյուր դոլար, որը պատրաստ է ապացուցելու, թե թերթում այդպիսի բան չկա:

Եվ Պենթֆիլդը ոսկեավազով ծանր տոպրակը գցեց սեղանին:

— Ձեր փողերն ինձ հարկավոր չեն, բայց քանի որ դուք պնդում եք...— Այս ասելով Ինվուդը թերթը մեկնեց Պենթֆիլդին:

Պենթֆիլդը նայում էր ու չէր կարող իրեն ստիպել հավատալու: Նա կարդաց «Հյուսիսից սլանում էր երիտասարդ Լոքինվարը» /Լոքինվար — Վալտեր Սքոթի «Մարմին» պոեմի հերոսներից մեկը:/ վերնագիրը և արագ աչքի անցկացրեց հաղորդագրությունը. նրա աչքերի առջևով անցան իրար կողքի դրված Մեյբլ Հոլմսի և Քորրի Հաթչինսոնի անունները: Հետո նա նայեց առաջին էջը. թերթը Սան-Ֆրանցիսկոյից էր:

— Փողերը ձերն են, Ինվուդ,— ասաց նա կարճ ծիծաղով:— Եթե իմ գործընկերն սկսեց, միայն աստծուն է հայտնի, թե որտեղ կանգ կառնի:

Այնուհետև Պենթֆիլդը անդրադարձավ հաղորդագրությանը և բառ առ բառ կարդաց այն: Այլևս կասկած չկար: Քորրի Հաթչինսոնը իսկապես ամուսնացել էր Մեյբլ Հոլմսի հետ: «Բոնանզայի արքաներից մեկը,— ասվում էր նորապսակի վերաբերյալ հաղորդագրության մեջ,— Լորենս Պենթֆիլդի գործընկերը (որին Սան-Ֆրանցիսկոյի հասարակությունը դեռ չի մոռացել), նրա հետ միասին տիրում է Զլոնդայկի շատ հարստությունների»: Իսկ հետո, վերջում, նա կարդաց, «Ասում են, թե միստր և միսիս Հաթչինսոնները որոշ ժամանակով մեկնելու են Արևելք, Դետրոյթ, բայց նրանք իրենց իսկական մեղրամիսը անցկացնելու են հեքիաթային Զլոնդայկում ճանապարհորդելով»:

— Ես կվերադառնամ: Ինձ համար տեղ պահեցեք,— ասաց Պենթֆիլդը, վեր կենալով ու վերցնելով տոպրակը, որը մինչ այդ արդեն հասցրել էր լինել կշեռքի վրա և հինգ հարյուր դոլարով թեթևացած վերադառնալ տիրոջ մոտ:

Պենթֆիլդը դուրս եկավ փողոց և գնեց Սիեթլից ստացված թերթը: Նրա մեջ նույն փաստերն էին, միայն թե ավելի հակիրճ շարադրված: Կասկած չկա, Քորրին և Մեյբլը ամուսնացել են: Նա վերադարձավ «Օպերա» և, իր տեղը գրավելով, առաջարկեց խաղալ առանց խաղագումարի սահմանափակման:

— Տեսնում եմ, որ ձեզ թափ է հարկավոր,— ծիծաղեց Նիք Ինվուդը գլխով անելով բանկ բռնողին:— Ես ուզում էի ընկերության պահեստները գնալ, բայց, թերևս, կմնամ: Ապա մի ցույց տվեք, թե ինչի եք ընդունակ:

Եվ Լորենս Պենթֆիլդը ցույց տվեց. երկու ժամվա կատաղի խաղից հետո բանկ դևոդը ատամներով պոկեց թարմ սիգարի ծայրը, վառեց լուցկին և հայտարարեց, որ բանկը խփված է: Պենթֆիլդը շահեց քառասուն հազար: Նա սեղմեց Նիք Ինվուդի ձեռքը ու հայտարարեց, որ իր այս խաղը վերջինն է:

Ոչ ոք չգիտեր, ոչ ոք չէր կռահում, որ հարված էր հասցված նրան և ծանր հարված: Նա արտաքուստ բոլորովին չէր փոխվել: Ամբողջ շաբաթ նա սովորականի պես զբաղվեց իր գործերով, բայց շաբաթ օրը նրա աչքովն ընկավ պորթլենդյան թերթը՝ հարսանեկան արարողության նկարագրությամբ հանդերձ: Այն ժամանակ նա ոսկու հանքը թողեց իր բարեկամներից մեկի հոգացողությանը և շներին լծած՝ գնաց Յուքոնով դեպի վերև: Նա շարժվում էր դեպի Ադի Ջուր տանող ճանապարհով, իսկ հետո շրջվեց դեպի Սալիտակ գետը: Հինգ օր հետո նա տեսավ տեղացի հնդկացիների ճամբարը: Երեկոյան խնջույք կազմակերպվեց. Պենթֆիլդը նստած էր պատվավոր տեղում, առաջնորդի կողքին: Հաջորդ առավոտյան նա շներին ետ քշեց դեպի Յուքոն, բայց այժմ նա մենակ չէր: Այդ երեկո ջահել սքվին կերակրեց նրա շներին ու նրան օգնեց քնելու:

տեղ պատրաստելու: Մանուկ հասակում արջը տրորել էր սքվոյին, և նա մի թեթև կաղում էր: Նրա անունը Լաշկա էր: Սկզբում սա վախենում էր օտար սպիտակամորթից, որը հայտնվեց Անհայտությունից և կնության առավ իրեն, ոչ մի բառ չասելով, նույնիսկ իր վրա չնայելով, իսկ հիմա էլ տանում էր դեպի Անհայտություն:

Բայց ի տարբերություն հնդկացի աղջիկների մեծամասնության, որոնց ընկերուհի են ընտրում հյուսիսի սպիտակները, Լաշկայի բախտը բերեց. նրանց իրար հետ կապող հեթանոսական ամուսնությունը քահանայի ձեռքով հաստատվեց Դոուսոնում, սպիտակամորթների ծեսերով: Դոուսոնից, որտեղ ամեն ինչ հրաշալի երազ էր թվում Լաշկային, Պենթեֆիլդը նրան բերեց Բոնանզայի հանքը և տեղավորեց բլրի վրա գտնվող նոր տնակում:

Սենսացիա առաջացրեց ոչ թե այն, որ Լորենս Պենթեֆիլդը հնդկացուհու հետ բաժանեց անկողինն ու օթևանը, այլ այն, որ նա այդ համակեցությունը օրինականացրեց ամուսնական արարողությամբ: Եկեղեցական ամուսնություն: Այդ ոչ ոք չէր կարող հասկանալ: Բայց Պենթեֆիլդին հանգիստ թողեցին. տեղի հասարակությունը հանդուրժում էր ամեն մի քմահաճույք, եթե այն իրեն չէր վնասում: Պենթեֆիլդին նույնիսկ չարգելեցին մուտք գործել այն տները, որտեղ սպիտակամորթ տանտիրուհիներ էին. հարսանեկան արարողությունը թույլ չէր տալիս Պենթեֆիլդի հետ վարվել սոսկ որպես հնդկացուհու հետ ապրող սպիտակամորթի, նրան չէր կարելի կշտամբել անբարոյականության մեջ, թեև շատ տղամարդիկ հավանություն չէին տալիս այդ ընտրությանը:

Սան-Ֆրանցիսկոյից այլևս նամակներ չէին ստացվում: Փոստը բերող վեց սահնակներ խորտակվել էին Մեծ Սաղմոնի մոտ: Բացի դրանից, Պենթեֆիլդը գիտեր, որ նորապսակներն արդեն պետք է Զլոնդայկում լինեն, և որ նրանց հարսանեկան ճանապարհորդությունը մոտենում է իր ավարտին, այն ճանապարհորդությունը, որի մասին նա երազել էր երկու երկար ու ձիգ տարիներ: Այս մասին մտածելիս՝ նրա շուրթերը դառնորեն ծռմռվում էին, բայց նա իր զգացմունքները թաքցնում էր ու միայն ավելի բարի դառնում Լաշկայի հանդեպ:

Մարտն անցավ, և արդեն մոտենում էր ապրիլի վերջը, երբ մի օր առավոտյան Լաշկան սիվաշ Փիտի մոտ գնալու թույլտվություն խնդրեց: Փիտի տնակը գտնվում էր գետի հոսանքով մի քանի մղոն ներքև: Փիտի կինը, Սթյուարտ գետահովտից մի հնդկուհի, մարդ էր ուղարկել ասելու, որ իր երեխան հիվանդացել է, իսկ Լաշկան, որը իսկապես մայրության համար էր ստեղծված, խորապես հավատում էր մանկական հիվանդությունների գծով իր գիտելիքներին և միշտ պատրաստ էր դայակություն անելու ուրիշների երեխաներին, քանի դեռ բախտը իրեն երեխա չէր պարգևել:

Պենթեֆիլդը լծեց շներին և, Լաշկային սահնակի վրա նստեցնելով, գնաց Բոնանզայի հունով դեպի ներքև: Դրսում զգացվում էր գարունը: Սառնամանիքն արդեն առաջվա պես չէր այրում և, թեև հողը դեռևս ձյունով էր ծածկված, շրշուններն ու ջրի քջքոցը ասում էին, որ ձմռան երկաթյա կաշկանդումը թուլանում է: Արահետը տեղ-տեղ ողողված էր ջրով և հարկ էր լինում շրջանցել ջրածածկ տարածությունները: Հենց այդպիսի մի տեղ, որտեղից երկու սահնակ չէին կարող անցնել իրար կողքով, Պենթեֆիլդը մոտեցող զանգակների դողանքներ լսեց ու կանգնեցրեց շներին:

Գետի ոլորանից հայտնվեց մի հոգևած շնալծվածք, որը ծանր բեռնված սահնակ էր քաշում: Սահնակավար տղամարդը ինչ-որ ծանոթ թվաց Պենթեֆիլդին: Սահնակի հետևից երկու կին էին գալիս: Պենթեֆիլդը նորից աչքերը շրջեց սահնակավարի վրա. Զորրին էր: Պենթեֆիլդը կանգնել սպասում էր: Նա ուրախ էր, որ Լաշկան իր հետ է: Նույնիսկ դիտավորյալ կերպով ավելի հաջող հանդիպում դժվար էր կազմակերպել, մտածեց նա: Սպասելով, նա աշխատում էր պատկերացնել, թե ի՞նչ կասեն նրանք, թե ինչ կարող են ասել նրանք: Ինքը խոսելիք չունեիր. նրանք պետք է բացատրեին, և ինքը պատրաստ էր լսելու նրանց բացատրությունները:

Երբ շնալծվածքները հավասարվեցին, Զորրին նկատեց նրան ու սահնակը կանգնեցրեց:

— Ողջո՛ւյն, ծերուկ,— բացականչեց նա ու ձեռքը մեկնեց:

Պենթեֆիլդը սառնությամբ և լուռ սեղմեց նրա ձեռքը: Մինչ այդ մոտեցան կանայք, և նա ի դեմս երկրորդ կնոջ ճանաչեց Դորա Հոլմսին: Նա, մորթե փափախը հանելով, սեղմեց Դորայի ձեռքը և շրջվեց դեպի Մեյբլը: Սա, գեղեցիկ ու ծիծաղկոտ, մի քայլ առաջ եկավ, բայց կարծես շփոթվեց իրեն մեկնված ձեռքը տեսնելով: Պենթեֆիլդը պատրաստվում էր ասելու՝ «Բարև ձեզ, միսիս Հաթչինսոն», բայց չգիտես ինչու «միսիս Հաթչինսոն» բառերը սառեցին նրա կոկորդում, և նա միայն փնթփնթաց:

— Բարև ձեզ:

Այնքան տհաճ և անհարմար վիճակ ստացվեց, որ նա կարող էր գոհ լինել: Մեյբլը շփոթված էր ու հուզված: Դորան, որին, ըստ երևույթին, որպես միջնորդ էին վերցրել իրենց հետ, ասաց.

— Լսեցեք, Լորենս, ի՞նչ է պատահել:

Չթողնելով, որ նա պատասխանի, Քորրին նրա թևքից քաշելով, մի կողմ տարավ:

— Լսիր, ծերուկ, սա ի՞նչ է նշանակում,— շնչոտնով հարցրեց նա՝ աչքերը Լաշկայի վրա հառած:

— Իսկ քեզ ի՞նչ, Քորրի,— ծաղրանքով ասաց Պենթֆիլդը:

Բայց Քորրին շարունակում էր իրենը պնդել.

— Ի՞նչ է անում այս սքվոն քո սահնակի վրա: Համա թե փորձանքի մեջ գցեցիր ինձ: Ի՞նչ ասել նրանց: Սակայն հուսով եմ՝ ինչ-որ բացատրություն կա: Ո՞վ է սա: Ո՞ւմ սքվոն է:

Եվ ահա այստեղ էր, որ Լորենս Պենթֆիլդը իր հարվածը հասցրեց: Այն հասցնելով, նա այնպիսի մի գոհունակություն զգաց, որը թվում էր, թե ինչ-որ չափով հատուցում էր իրեն պատճառված չարիքը:

— Սա իմ սքվոն է,— ասաց նա:— Ձեր թույլտվությամբ՝ միսիս Պենթֆիլդը:

Քորրի Հաթչինսոնի շունչը կտրվեց: Պենթֆիլդը շրջվեց նրանից ու մոտեցավ կանանց: Մեյբլի դեմքը տազնապալի էր, և սա կարծես մտադիր չէր խոսել: Պենթֆիլդը, ասես ոչինչ չէր եղել, դիմեց Դորային.

— Ինչպե՞ս անցավ ճանապարհորդությունը: Շա՞տ եք մրսել կանգառներում:

— Իսկ ինչպե՞ս է իրեն զգում միսիս Հաթչինսոնը,— այնուհետև հարցրեց նա, մի հայացք գցելով Մեյբլի վրա:

— Սիրելի հիմարիկ,— բացականչեց Դորան, գրկելով ու ցնցելով նրան: Ուրեմն դո՞ւք էլ եք կարդացել: Ահա թե ինչու այսքան տարօրինակ եք պահում ձեզ:

— Ես... ես չեմ հասկանում...— փնթփնթաց նա:

— Հաջորդ համարում ուղղում է տրված,— վրա էր տալիս Դորան:— Մեր մտքով անգամ չէր անցնում, թե այդ համարը ձեր ձեռքը կընկնի: Մնացած թերթերում ամեն ինչ ճիշտ էր: Բայց, իհարկե, հենց այդ չարաբաստիկ թերթն է ձեր ձեռքն ընկել:

— Սպասեցեք, ինչի՞ մասին եք ասում,— ընդհատեց Պենթֆիլդը: Անսպասելի վախից նրա սիրտը սեղմվեց: Նա իրեն զգաց անդունդի եզրին:

Իսկ Դորան անընդհատ խոսում էր.

— Գիտեք, երբ հայտնի դարձավ, որ Մեյբլը և ես Զլոնդայկ ենք մեկնում, «Շաբաթաթերթում» տպագրեցին, թե մեր մեկնելով Միրդոնավենյուն մարդաշատ կդառնա, որ, իհարկե, նշանակում էր՝ կդատարկվի:

— Ուրեմն...

— Ես եմ միսիս Հաթչինսոնը,— պատասխանեց Դորան:— Իսկ դուք կարծում էիք, թե Մեյբլն է:

— Ճիշտ այդպես,— դանդաղ խոսեց Պենթֆիլդը:— Այժմ ես հասկացա: Թղթակիցը շփոթել է անունները, իսկ Սիեթլի և Պորթլենդի թերթերը արտատպել են, ինչպես որ եղել է:

Նա լռեց: Մեյբլը նորից շրջվեց դեպի նա, և Պենթֆիլդը տեսավ, որ նա սպասում է: Քորրին իր մոքասինի քրքրված քիթն էր զննում մեծ հետաքրքրությամբ, իսկ Դորան աչքի պոչով նայում էր սահնակի վրա նստած Լաշկայի անվորդով դեմքին: Լորենս Պենթֆիլդը նայում էր ուղիղ իր առջև, անհուսալի ապագային, որտեղ նա տեսնում էր միայն շնաթվածքը, իրեն և կողքին էլ՝ կաղ Լաշկային:

Հետո նա խոսեց շատ պարզ ձևով, նայելով Մեյբլի աչքերի մեջ:

— Ներեցեք: Իմ մտքով էլ չի անցել, որ այդպիսի սխալ կարող է լինել: Ես կարծում էի, թե դուք ամուսնացել եք Զորրիի հետ: Այնտեղ, սահնակի վրա, միսիս Պենթֆիլդն է...

Մեյբլ Հոլմսը ուժասպառ շրջվեց դեպի քույրը. թվում էր, թե ծանր ճանապարհի ամբողջ հոգնությունը հանկարծակի իջավ նրա վրա: Դորան բռնեց նրան: Զորրի Հաթչինսոնի հայացքը դեռևս գամված էր իր մոքասիներին:

Պենթֆիլդը նայեց նրան, երկու կանանց և գնաց դեպի սահնակը:

— Պետք է մեկնել. Փիտի երեխան չի կարող ամբողջ օրը մեզ սպասել,— ասաց նա Լաշկային:

Երկար մտրակը շաչեց, շները ձգափոկերը քաշեցին, սահնակը տեղից պոկվեց և առաջ սլացավ:

— Լսիր, Զորրի,— շրջվելով ձայն տվեց Պենթֆիլդը:— Դու կարող ես հին տնակը զբաղեցնել: Հիմա այն դատարկ է: Ես նորն եմ կառուցել բլրի վրա: